Հաշվետվություն
2022 թվականի սեպտեմբերի 5-ից 9-ը Նիդերլանդների Թագավորություն (քաղաք Ապելդորն) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Արամ Գուգարաց

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
Նիդերլանդների Թագավորություն, Ապելդորն, սեպտեմբերի 5-ից 9-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Նիդերլանդների Թագավորության կադաստրի, հողերի հաշվառման և քարտեզագրման գործակալության հետ (Kadaster)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   - Ծանոթանալ Նիդերլանդների Թագավորության Կադաստրի արխիվների թվայնացման փորձին

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.
   - թղթային արխիվից թվային փոխակերպման պլաններին աջակցող գործողությունների համառոտ նկարագիրը,
   - արխիվների թվայնացումը,
   - փորձի փոխանակում Նոտարի և Կադաստրի (Kadaster) միջև արխիվների թվայնացման և աշխատանքային գործընթացների վերաբերյալ,
   - ծանոթացում Նիդերլանդների Թագավորության ազգային արխիվի գործառույթներին, թղթային և թվային արխիվների հավաքածուների կառավարման վերաբերյալ համառոտ ներկայացում, թվային տեխնոլոգիաների պահպանմանն առնչվող հարցերի քննարկում,
   - այցելություն Առնհեմ քաղաքի կադաստրի գրասենյակ և կադաստրի թանգարան,
   - հանդիպում Առնհեմի կադաստրի մասնագիտական ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, սեփականության գրանցման և նոտարական գործարքներին առնչվող հարցերի քննարկում, փորձի փոխանակում,
   - նորարարական գործընթացների կենտրոնի գործունեության ծանոթացում,

- գրասենյակային աշխատանքի, արխիվների, ազգային արխիվի հետ համագործակցության մասին տեղեկատվության ներկայացում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների (ենթակառուցվածքներ) LIS/ կադաստրի թեմայով շնորհանդեսի ներկայացում,
- ամբողջական թվային ռազմավարությանը նվիրված աշխատաժողով,
- էլեկտրոնային ծառայություններ:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Վերոնշյալ ճանաչողական այցին Կադաստրի կոմիտեն ներկայացրել են կոմիտեի ղեկավարի տեղակալ Արամ Գուգարացը, գլխավոր քարտուղար Միհեր Խաչատրյանը, Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման ղեկավար Սարգիս Արամյանը, ինչպես նաև Կոմիտեի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները: Այցի ընթացքում կոմիտեի պատվիրակությունը ղեկավարի տեղակալ Ա. Գուգարացի գլխավորությամբ Ապելդորնի կադաստրի գրասենյակում հանդիպել է միջազգային հարցերով ղեկավարի հետ: Հանդիպմանը ներկա է եղել նաև Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Նիկո Սխերմերսը: Հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվել է ընթացիկ ծրագիրը, նիդերլանդական կողմին է ներկայացվել ոլորտում իրականացված վերջին զարգացումները, ինչպես նաև կատարված բարեփոխումները: Կողմերը հույս են հայտնել, որ կոմիտեի արխիվի մասնագետներն այցի ընթացքում հնարավորություն կունենան ծանոթանալու Նիդերլանդների կադաստրի արխիվների թվայնացման գործընթացին և քննարկելու այն բոլոր մասնագիտական մանրամասները, որոնք առնչվում են արխիվների թվայնացմանը:

Կոմիտեի պատվիրակությունը այցելություն է կատարել նոտարական գրասենյակ, ծանոթացել գույքի սեփականության գրանցման և նոտարական ծառայության մատուցման գործընթացին: Հատագայում՝ տեղակայված ազգային արխիվ այցելության ընթացքում, հայկական կողմին է ներկայացվել թղթային և թվային արխիվների հավաքածուների պահպանման, թվային տեխնոլոգիաների կառավարման նիդերլանդական փորձը, ցուցադրվել են հին քարտեզներ, ծանոթացրել են ներկայումս հին հավաքածուների թվայնացման գործընթացին, ինչպես նաև արխիվի ցուցահանդեսային հավաքածուներին: Առնհեմ քաղաքի կադաստրի գրասենյակում կադաստրի կոմիտեի ներկայացուցիչներին ներկայացվել է գրասենյակի գործունեությունը, թանգարանում առկա գեոդեզիական հավաքածուները, երկուստեք քննարկվել են սեփականության գրանցման և նոտարական գործարքներին առնչվող հարցերը, ցուցադրվել է Նիդերլանդների կադաստրի սեփականության գրանցման էլեկտրոնային համակարգը: Ապելդորնի գրասենյակում ներկայացվել է Տեղեկատվական

տեխնոլոգիաների (ենթակառուցվածքներ) LIS/ կադաստրի թեմայով շնորհանդես, Կադաստրի կոմիտեի աշխատակիցների հետ անցկացվել է ամբողջական թվային ռազմավարությանը նվիրված աշխատաժողով, շեշտը դնելով էլեկտրոնային ծառայությունների վրա, որոնք բխում են քաղաքացիներին մատչելի ծառայությունների մատուցման շահերից:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը երկու երկրների լիազոր մարմինների միջև, ինչպես նաև նիդերլանդական կողմը հույս է հայտնել 2023 թվականի ընթացքում այցելել Հայաստան:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.

ՀՀ գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում գործող նորմատիվ իրավական ակտերի կարգավորման, ինչպես նաև արխիվի թվայնացման գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով իրականացվում է իրավական դաշտի կարգավորում, մասնավորապես՝ (իրավական ակտի նախագիծը «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին», «Տարածական տվյալների մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթների լրամշակված տարբերակները 2022 թվականի սեպտեմբերի 2-ի N ՍԹ/9532-2022 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, իսկ 2022 թվականի սեպտեմբերի 2-ի N ՍԹ/9542-2022 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթի լրամշակված տարբերակը):

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Արամ Գուգարաց 13.09.2022թ.